ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի մայիսի 25-ի թիվ 189 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱԳԱԾԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՈՒՇ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 2-րդ մասով, 220-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետով, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 20-րդ մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածի Դ.Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անուշ Բեյբությանի կողմից 2026 թվականի մայիսի 14-ին ներկայացրած բացատրագիրը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Արագածի Դ.Դեմիրճյանի անվան հ.1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անուշ Բեյբությանին հայտարարել խիստ նկատողություն՝ աշխատանքային կարգապահությունը խախտելու հիմքով:
2. Սույն որոշման մասին պատշաճ կարգով իրազեկել Անուշ Բեյբությանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում Անուշ Բեյբությանին պատշաճ կարգով իրազեկելու պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3510860535

X

Պարտականությունները կատարող՝ Signed by: GRIGORYAN ARMEN 3510860535 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

2026թ. մայիսի 25
ք.Աշտարակ